



Արմենիա  
Ինչուրանս

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»  
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ Խորհրդի  
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ

# ՎԱՐԿԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք. Երևան

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

|                                                                                                   |    |
|---------------------------------------------------------------------------------------------------|----|
| ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....                                                                | 3  |
| ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....                                                          | 4  |
| ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ<br>ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ.....        | 5  |
| ԲԱԺԻՆ 4. ՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ<br>ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՁԵՎ .....      | 8  |
| ԲԱԺԻՆ 5. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՓ.....                                                                | 9  |
| ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ<br>ՊԱՅՄԱՆՆԵՐ.....                            | 10 |
| ԲԱԺԻՆ 7. ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ) .....                                                       | 11 |
| ԲԱԺԻՆ 8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....                                           | 12 |
| ԲԱԺԻՆ 9. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ<br>ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)..... | 14 |
| ԲԱԺԻՆ 10. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ.....                                                         | 14 |
| ԲԱԺԻՆ 11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ .....                                                               | 16 |

## ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն «Վարկի կամավոր ապահովագրության կանոնները» (այսուհետ՝ Կանոններ) սահմանված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի համաձայն:

1.2. Վարկի կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ոչ կյանքի Ապահովագրության տեսակի «Վարկի ապահովագրություն» դասի մեջ:

1.3. Կանոնները հանդիսանում են Վարկի կամավոր ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի (այսուհետ՝ Ապահովագրության պայմանագիր) անբաժանելի մասը: Ապահովագրության պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, չպետք է հակասեն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերին:

1.4. Կանոնների համաձայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ապահովագրող), գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, կնքում է Վարկի կամավոր Ապահովագրության պայմանագրեր բանկերի և վարկային կազմակերպությունների հետ (այսուհետ՝ Ապահովադիր): Կանոնների համաձայն Ապահովագրության պայմանագրերը կնքվում են վարկերի վերադարձելիության ապահովագրության նպատակով:

Կանոնների համաձայն Ապահովադրի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին, ինչպես նաև իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումներին տրամադրվող վարկերը կարող են լինել ինչպես դրամային, այնպես էլ արտարժույթային:

Կանոնները գործում են ոսկու գրավով մասամբ ապահովված վարկային պայմանագրերի գծով վարկի չապահովված մասի նկատմամբ, որոնք տրամադրվում են Ապահովադրի և Ապահովագրողի միջև նախօրոք համաձայնեցված նպատակների համար (անձնական և գույքային ապահովագրություն):

1.5. Կանոններում գործածվող հիմնական հասկացություններն են՝

- *Ապահովագրող*՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ,
- *Ապահովադիր*՝ Ապահովագրողի հետ Ապահովագրության պայմանագիր կնքող բանկ կամ վարկային կազմակերպություն,
- *Շահառու*՝ Ապահովագրության պայմանագրում նշված բանկ կամ վարկային կազմակերպություն, որը համաձայն իրավական ակտերի կամ պայմանագրերի ունի ապահովագրական հատուցում ստանալու առաջնային իրավունք,
- *Վարկ*՝ Վարկային պայմանագրով բանկի կամ վարկային կազմակերպության կողմից որոշակի ժամկետով վերադարձելիության և վարկային տոկոսի վճարման պայմանով տրամադրված դրամական միջոցներ,
- *Վարկային սահման*՝ Տրամադրվող վարկի առավելագույն գումար, որի սահմաններում Կանոնների համաձայն իրականացվում է ապահովագրությունը,

## ՎԱՐԿԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

- *Վարկի առավելագույն ժամանակահատված՝* Ապահովագրության պայմանագրում վարկի վերադարձման համար սահմանված առավելագույն ժամանակահատվածը,
- *Ապահովագրական պարահար՝* ցանկացած պատահար, որը հայտնի է դառնում Ապահովագրողին և որը համարվում է Կանոնների համաձայն ապահովագրական և կարող է հանգեցնել վարկի մարման ժամկետի կետանցման,
- *Վարկառու՝* իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ով Վարկային պայմանագրի հիման վրա ստացել է դրամական միջոցներ,
- *Վարկային պայմանագիր՝* Վարկատուի և Վարկառուի կողմից ստորագրված գրավոր պայմանագիր, որը հավաստում է բանկի կամ վարկային կազմակերպության կողմից Վարկառուին տրամադրված դրամական միջոցների մասին՝ ներառելով իր մեջ դրամական միջոցների չափը, տոկոսագումարը, արժույթը և այլ վավեր պայմաններ,
- *Վճարունակություն՝* Վարկառուի ունակությունը՝ ժամանակին և ամբողջ ծավալով իրականացնելու Վարկային պայմանագրով սահմանված վճարումները,
- *Չհատուցվող գումար (ֆրանշիզա)՝* Ապահովագրողի մասնակցության չափը վնասի հատուցմանը,
- *Ապահովագրական հայր՝* Կանոններում նշված պատճառներով վարկի մարումը չկատարելու կամ մասնակի կատարելու վերաբերյալ Ապահովագրողի դիմումը,
- *Ապահովագրական ռիսկ՝* է հանդիսանում Վարկառուի կողմից Վարկային պայմանագրով (օվերդրաֆտի) սահմանված իր դրամային պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ (մասնակի) կատարումը:
- *Ապահովագրողի կողմից հաստատված և Ապահովագրողի հետ մշակված համաձայնագիր՝* Վարկառուների վարկավորման գործընթացի վերաբերյալ Ապահովագրողի կողմից մշակված համաձայնագիր, որը ներառում է քայլերի ու միջոցառումների նկարագրությունը՝ վարկի համար վարվող բանակցությունների, պոտենցիալ վարկառուի վարկարժանության գնահատման պահից մինչև վարկի մարումն ընկած ժամանակահատվածում, ընդ որում Ապահովագրողի կողմից սահմանված քայլերն ու միջոցառումները համաձայնեցվում է Ապահովագրողի հետ: Բացի այդ, կախված վարկի տեսակից՝ Ապահովագրության պայմանագրով ամրագրվում են Վարկառուներից յուրաքանչյուրին տրամադրված վարկի՝ ապահովագրական ծածկույթում ընդգրկելու նվազագույն չափանիշները և պայմանները (եկամուտների առկայությունը մասին վկայող փաստաթղթեր, ժամկետանց կամ ստանդարտ չդասակարգված վարկային պարտավորությունների բացակայություն, ՀՀ-ում մշտական բնակության վայրի առկայություն և այլն):

## ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանոնների համաձայն Ապահովագրողի կողմից չի հատուցվում այն վնասը կամ կորուստը, որը՝

2<sup>1</sup>. տեղի է ունեցել մինչև ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը կամ ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո:

## ՎԱՐԿԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

2"2. Ապահովագրության ենթակա չեն Ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորություն ունեցող վարկառուների վարկերը,

2"3. հետևանք է պատերազմի, կամ պատերազմական գործողությունների /անկախ այն բանից, պատերազմը հայտարարված է, թե ոչ, քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, բողոքի, զանգվածային իրարանցման, ռազմական դրության և նմանատիպ գործողությունների ուղղակի կամ անուղղակի ազդեցության, առաջացել է Վարկառուի ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի արդյունքում,

2"4. առաջացել է Վարկառուի թմրամիջոցներ օգտագործելու արդյունքում,

2"5. արդյունք է Վարկառուի կողմից ինքն իրեն մարմնական վնասվածք հասցնելու,

2"6. առաջացել է Վարկառուից ստացվող միջոցները ոչ թե վարկի մարմանը, այլ տվյալ վարկի մարման հետ չկապված այլ նպատակներին (ինչպես օրինակ Վարկառուի այլ պարտավորությունների մարմանը) ուղղմամբ,

2"7. Ապահովագրի ղեկավարների կամ բաժնետերերի (մասնակիցների) դիտավորյալ գործողությունների արդյունքում վարկի չմարման կամ մասնակի մարման պատճառ է հանդիսացել,

2"8. առաջացել է առանց Ապահովագրողի հետ համաձայնեցման վարկային պայմանագրի պայմանների փոփոխմամբ պայմանավորված վարկի չմարման արդյունքում,

2"9. առաջացել է Ապահովագրի կողմից վարկի նպատակային օգտագործման նկատմամբ սահմանված և համաձայնեցված ընթացակարգերին ոչ համապատասխան հսկողության իրականացման արդյունքում,

2"10. առաջացել է Ապահովագրի կողմից տրամադրված վարկը ոչ նպատակային օգտագործելու արդյունքում,

2"11. Ապահովագրության պայմանագրի համաձայն ապահովագրման ենթակա է միայն այն Վարկի վերադարձելիությունը, որը տրամադրվել է Ապահովագրի կողմից հաստատված և Ապահովագրողի հետ համաձայնեցված ընթացակարգով:

## **ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ**

3"1. Ապահովագրության պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է սահմանված որոշակի գումարի (ապահովագրավճարի) դիմաց Կանոններով սահմանված և Ապահովագրության պայմանագրում նշված որոշակի ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրին վճարել Ապահովագրության պայմանագրով սահմանված որոշակի գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում ապահովագրական հատուցում:

3"2. Ապահովագրության պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսանում Ապահովագրի կողմից լրացված Դիմում-Հարցաթերթիկը: Ապահովագրողը կարող է պահանջել նաև փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են Ապահովագրության պայմանագրի կնքման և դիսկի գնահատման համար՝ ներառյալ Վարկառուի վճարունակությունը և սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր:

3"3. Ապահովագրության պայմանագրի կնքման համար Ապահովագրողը կարող է պահանջել նաև Վարկային պայմանագրի պատճեն:

3"4. Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Ապահովագրության պայմանագրում: Ապահովագրության գործողության ժամկետի սկիզբը չի կարող լինել Ապահովագրության պայմանագրի կնքման ժամկետից շուտ:

3"5. Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրանով նախատեսված ապահովագրավճարը կամ դրա մի մասը Ապահովագրողին վճարելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության Պայմանագրով:

3"6. Ապահովագրության պայմանագիրը գործում է Վարկային պայմանագրով վարկի գումարի վերադարձման համար սահմանված ժամկետին համապատասխան և Ապահովագրության պայմանագրում նշված վարկի առավելագույն ժամանակահատվածի ընթացքում:

3"7. Կանոնների համաձայն տրամադրվող ապահովագրությունը գործում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում:

3"8. Ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարը կամ դրա մի մասը Ապահովագրության պայմանագրով նախատեսված ժամկետում Ապահովագրողի կողմից չվճարելու դեպքում չվճարված ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետը լրանալու օրվա ժամը 17.00-ից մինչև չվճարված ապահովագրավճարը վճարելու օրվա ժամը 23.59 տեղի ունեցած ապահովագրական դեպքերով Ապահովագրողը հատուցում չի վճարում:

3"9. Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է՝

ա) Ապահովագրության պայմանագրում նշված ժամկետի լրանալուց հետո.

բ) Ապահովագրողի կողմից Ապահովագրության Կանոնների և դրանց հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելուց հետո,

գ) կողմերի համաձայնությամբ.

դ) մեկ կամ մի քանի վնասների հատուցման արդյունքում Պատասխանատվության Համախառն սահմանաչափի սպառման հետևանքով,

ե) եթե Վարկային պայմանագրի մեջ կատարվել են փոփոխություններ, որոնց մասին Ապահովագրողին չի տեղեկացվել,

զ) Վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունները Վարկառուի կողմից ամբողջությամբ կատարվելուց հետո:

է) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

3"10. Ապահովագրողը ցանկացած ժամանակ իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվելու Ապահովագրության պայմանագրից, այդ մասին ենթադրվող դադարեցման մասին առնվազն 15 օր առաջ տեղեկացնելով Ապահովագրողին: Ապահովագրողի պահանջով Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն

Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 80%-ը, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 100 %-ը:

3"11. Ապահովագրողն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Ապահովագրության պայմանագիրը՝ այդ մասին ենթադրվող դադարեցման մասին առնվազն 15 օր առաջ տեղեկացնելով Ապահովադրին: Ապահովագրողի պահանջով Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 100%-ը: Եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից Ապահովագրության Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում են Ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 80 %-ը:

3"12. Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Ապահովագրության պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար (բացառությամբ այն դեպքի, երբ ապահովագրական հատուցումը մերժվել է և Ապահովադիրը (Շահառուն) համաձայնվել է Ապահովագրողի կողմից տրամադրված մերժման վերաբերյալ եզրակացության հետ կամ Ապահովադիրը գրավոր հրաժարվել է ապահովագրական հատուցում ստանալուց) կամ ստացել է ապահովագրական հատուցում:

3"13. Որևէ Ապահովադրի նկատմամբ Ապահովագրության պայմանագրի դադարեցմամբ դադարում է նաև տվյալ Ապահովագրության պայմանագրի գործողության դադարումից հետո ի հայտ եկած Ապահովադրի կողմից կրած կորստի հանդեպ Ապահովագրողի պատասխանատվությունը:

3"14. Եթե Ապահովադիրը որևէ պահանջ ներկայացնի, իրազեկ լինելով, որ այն կեղծ կամ ապօրինի է, ապա Ապահովագրության պայմանագիրը կդադարի գործել և ներկայացված պահանջները կմերժվեն:

**ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ,  
ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՁԵՎ**

4.1. Ապահովագրական գումար է համարվում Ապահովագրության պայմանագրով սահմանված այն դրամական գումարը, որի սահմաններում Ապահովագրողը, ապահովագրական պատահար տեղի ունենալիս պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում: Կանոններով կարող է սահմանվել ինչպես յուրաքանչյուր վարկի գծով առանձին ապահովագրական գումար, այնպես էլ վարկային պորտֆելի գծով ապահովագրական գումար:

Ապահովագրության պայմանագրով ապահովագրական գումարը չի կարող գերազանցել վարկային սահմանը և վարկի գծով հաշվարկված տոկոսների գումարը, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ապահովադրի հետ կնքված Ապահովագրության պայմանագրով ապահովագրական գումարը չի կարող գերազանցել Ապահովագրության պայմանագրով կնքման օրվա դրությամբ Ապահովադրի կողմից Դիմում-Հարցաթերթիկում նշված վարկային գումարների ամբողջ ծավալը, բացառությամբ Կանոններով և Ապահովագրության պայմանագրով նախատեսված դեպքերի:

4.2. Ապահովագրության պայմանագրով կարող են նախատեսվել ապահովագրական պատահարով հատուցման ենթակա առավելագույն չափեր՝ ապահովագրական գումարի ենթասահմանաչափեր:

4.3. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ ապահովագրական գումարի ենթասահմանաչափերը որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4.4. Ապահովագրավճար է համարվում ապահովագրության համար նախատեսվող այն գումարը, որն Ապահովադիրն Ապահովագրության պայմանագրի համաձայն պարտավոր է վճարել Ապահովագրողին և որը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, ապահովագրության ժամկետներից, ապահովագրական ռիսկերից, Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից և դրանց ծավալից, չհատուցվող գումարի մեծությունից և Ապահովագրողի պատասխանատվության վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքներից:

4.5. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել միանվագ՝ ամբողջ Ապահովագրության ժամկետի համար կամ մաս-մաս: Վճարման կարգը սահմանվում է Ապահովագրության պայմանագրով:

4.6. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի դրամարկղ կամ ներկայացուցչին, իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի համապատասխան հաշվարկային հաշվին:

4.7. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Ապահովագրության պայմանագրով:

4.8. Ապահովագրավճարի տարաժամկետ վճարում նախատեսող Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական պատահար տեղի ունենալու

դեպքում Ապահովագրողն իրավունքի ունի հատուցման չափը պակասեցնել ապահովագրավճարի չվճարված մասի չափով, եթե հատուցման չափը գերազանցում է ապահովագրավճարի չվճարված մասի 250 տոկոսը կամ հատուցման արդյունքում ապահովագրական գումարի մնացորդը կազմելու է ապահովագրավճարի չվճարված մասի 600 տոկոսից պակաս:

## **ԲԱԺԻՆ 5. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՓ**

5.1. Պայմանների համաձայն երկու կամ ավելի Վարկառուների համատեղ վարկը դիտվում է որպես յուրաքանչյուր անձի առանձին բանկային վարկ, Վարկառուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե Վարկային պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային վարկի վարկառուի մասնաբաժինները, ապա համատեղ բանկային վարկը Վարկառուների միջև բաժանվում է հավասարաչափ:

5.2. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում պատասխանատվության չափը յուրաքանչյուր և բոլոր կորուստների գծով սահմանափակվում է պատասխանատվության համախառն սահմանաչափի շրջանակներում (ընդհանուր ապահովագրական գումար): Համախառն սահմանաչափի շրջանակներում սահմանված ենթասահմանաչափը (ապահովագրական գումարի ենթասահմանաչափը) կիրառվում է Ապահովագրության պայմանագրի ապահովագրական գումարի սահմաններում, այլ՝ ոչ թե լրացուցիչ:

5.3. Պայմանների հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրով Պատասխանատվության Համախառն սահմանաչափը (ապահովագրական գումարը) նվազեցվում է կատարած ցանկացած հատուցման (վճարման) չափով: Եթե վճարվող հատուցումները սպառում են Պատասխանատվության Համախառն սահմանաչափը, Ապահովագրողն այլևս հատուցում իրականացնելու պարտավորություն չի կրում:

Համախառն սահմանաչափի սպառման դեպքում Ապահովագրողն այդ մասին տեղեկացնում է Ապահովադրին, որպեսզի Ապահովադիրը իր սեփական ծախսերով ստանձնի իր շահերի պաշտպանման պատասխանատվությունը:

5.4. Պայմանների համաձայն և դրանց հիման վրա տրված Ապահովագրության պայմանագրով ապահովագրական պատահարի (ռիսկի) համար կատարած ցանկացած հատուցում (վճարում) նվազեցնում է ոչ միայն Համախառն սահմանաչափը, այլ նաև ենթասահմանաչափը: Եթե վճարվող հատուցումները սպառում են ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասի համար նախատեսված Ապահովագրողի պատասխանատվության ենթասահմանաչափը, Ապահովագրողն այլևս պարտավորություն չի կրում Ապահովադրին հատուցել տվյալ պատահարի հետևանքով պատճառած վնասը:

5.5. Ապահովագրության պայմանագրով սահմանված Համախառն սահմանաչափը և ենթասահմանաչափը ենթակա չեն ինչպես լրիվ, այնպես էլ մասնակի վերականգնման, քանի դեռ փաստացի չի վճարվել լրացուցիչ ապահովագրավճարը:

5.6. Եթե Ապահովադրի կրած վնասը ենթակա է հատուցման մի քանի դրոյթներով, ապա այդ դեպքում հատուցման առավելագույն չափը չպետք է գերազանցի

ապահովագրական պատահարի գծով սահմանված պատասխանատվության առավելագույն չափերը:

5.7. Ապահովագրական հատուցումը վճարելիս դրա չափը նվազեցվում է ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով, եթե այդպիսին նախատեսված է Ապահովագրության պայմանագրով:

## **ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

6.1. Ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանագրի հիման վրա Ապահովադրին կամ Շահառուին վճարման ենթակա դրամական արտահայտությամբ գումարն է:

6.2. Կանոնների համաձայն ապահովագրական պատահար է հանդիսանում Ապահովադրի հանդեպ Վարկառուի ժամկետանց պարտավորությունների առկայությունը համաձայն համապատասխան վարկային պայմանագրի՝ վարկի և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների մասով:

Կետանցումը ճանաչվում է ապահովագրական պատահար, եթե Ապահովադրի կողմից իրականացվել են վարկի վերադարձմանն ուղղված միջոցառումները, որոնք ներառված են Ապահովագրողի հետ կնքվող Ապահովագրության պայմանագրում:

Ամեն դեպքում, վարկի մարման կետանցումը կարող է ճանաչվել ապահովագրական պատահար միայն դրա կամ դրա մի մասի մարման համար վարկային պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո նվազագույնը 5 և առավելագույնը 90 օր հետո: Ապահովագրական դեպքի ճանաչման համար վարկի մարման կետանցման ժամկետը հստակ սահմանվում է Ապահովագրության պայմանագրում:

6.3. Եթե Ապահովադիրը տվյալ Վարկառուի նկատմամբ ունի հանդիպական պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է ժամկետանց վարկի և հանդիպական պարտավորության հաշվարկված դրական տարբերության հիման վրա:

6.4. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրության պայմանագրով և/կամ Կանոններով սահմանված կարգով Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական հատուցումը ստանալու վերաբերյալ հայտ, ինչպես նաև ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր:

6.5. Յուրաքանչյուր հայտ Ապահովագրողը ստուգում է Ապահովադրի կողմից հաստատված և Ապահովագրողի հետ մշակված համաձայնագրով սահմանված ընթացակարգին համապատասխանության տեսանկյունից՝ պահանջելով համապատասխան փաստաթղթեր Ապահովադրից:

6.6. Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին Կանոններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում): Ապահովագրողն

ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին որոշումը պատշաճ կերպով պարտավոր է հանձնել Ապահովադիրին:

Պատշաճ հանձնում է համարվում Ապահովադիրին կամ նրա լիազոր ներկայացուցչին անձամբ հանձնելը կամ Ապահովադիրի հասցեով փոստային առաքումը:

Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել: Հատուցման մերժման որոշում կայացնելիս Ապահովագրողը պարտավոր է որոշումը կայացնելուց հետո 5 օրյա ժամկետում տեղեկացնել է Ապահովադիրին (Շահառուին)՝ նրա մշտական գործունեության հասցեով:

6.7. Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

6.8. Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

ա) Ապահովադիրն այն պահից, երբ իրեն հայտնի է դարձել ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը, չի հայտնել Ապահովագրողին Կանոններով և Ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

բ) Ապահովադիրը, կանխամտածված կերպով չի ձեռնարկել հնարավոր կորուստները փոքրացնելու համար անհրաժեշտ ողջամիտ և մատչելի միջոցներ:

6.9. Այն պատահարի տեղի ունենալու դեպքում, որի հետևանքները հիմք են հանդիսանում կամ կարող են հիմք հանդիսանալ ապահովագրական պատահարի առաջացման և Կանոններից ելնելով ապահովագրական հատուցման վճարման համար, Ապահովադիրը կամ նրա ներկայացուցիչը պարտավոր են ձեռնարկել բոլոր հնարավոր ողջամիտ միջոցառումները պատահարի (ապահովագրական պատահարի) հետևանքները կանխարգելելու կամ նվազեցնելու համար՝ հասցված վնասի գումարը փոքրացնելու նպատակով:

6.10. Եթե վնասների կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված վերը նշված միջոցառումները չեն ձեռնարկվել Ապահովադիրի մեղքով, և վնասի մեծությունն աճել է, Ապահովագրողն իրավունք ունի նվազեցնել Ապահովադիրին վճարման ենթակա հատուցման գումարը հիմնական վնասի գծով:

## **ԲԱԺԻՆ 7. ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)**

7.1. Ապահովագրության պայմանագրում կողմերը կարող են սահմանել Ապահովադիրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար (ֆրանշիզա):

7.2. Զհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ:

7.3. Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե ավտոտրանսպորտին պատճառված վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով կամ չհատուցվող գումարը հավասարվում է 0-ի:

7.4. Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

## **ՔԱԺԻՆ 8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **8.1. Ապահովադիրն իրավունք ունի՝**

ա) Ապահովագրողից պահանջել նրա պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հաստատող փաստաթղթերը,

բ) ծանոթանալ Ապահովագրության պայմաններին,

գ) Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական գործակալների և բրոքերների միջոցով,

դ) ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո ստանալ ապահովագրական հատուցում,

ե) Ապահովագրության պայմանագրի կորստի դեպքում ստանալ դրա կրկնօրինակը, որից հետո կորցրած պայմանագիրը ճանաչվում է անվավեր և նրա հիման վրա հատուցումներ չեն կատարվում: Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում, Ապահովագրության պայմանագրի կրկնօրինակի կորստի դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից գանձել պայմանագրի պատրաստման համար կատարված ծախսին համարժեք գումար:

### **8.2. Ապահովադիրը պարտավոր է՝**

ա) Ապահովագրության պայմանագրում նշված ժամկետներում մուծել ապահովագրավճարները,

բ) Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար նշանակություն ունեցող՝ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,

գ) Ապահովագրության պայմանագրով և Կանոններով սահմանված ժամկետում Ապահովագրողին հայտնել ապահովագրական պատահարի առաջացման մասին, ինչպես նաև ներկայացնել ապահովագրական պատահարի պատճառների և հանգամանքների վերաբերյալ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,

դ) ապահովագրական պատահարների առաջացման դեպքում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումներ՝ վնասները կանխելու կամ նվազեցնելու նպատակով,

ե) Ապահովագրողի պահանջով տրամադրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ ներառյալ Վարկառուների քանակի, տրամադրված գումարների և հաշվարկված տոկոսների հաշվարկի վերաբերյալ փաստաթղթեր, ինչպես նաև լրացուցիչ այլ տեղեկատվություն:

զ) Կանոնների հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրով հատուցում ստանալու համար վնասի հետ առնչվող բոլոր հարցերում ամբողջությամբ համագործակցել Ապահովագրողի և նրա ներկայացուցիչների հետ:

է) հաղորդել Ապահովագրողին ապահովագրական պատահարի հետ կապված իրավասու մարմինների գործողությունների մասին (հետաքննություն, դատական կանչ և այլն),

ը) առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության չտալ խոստումներ և չանել առաջարկություններ կորստի կամ վնասի կամավոր հատուցման վերաբերյալ,

8.3. Ապահովագրողը հրաժարվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց, եթե Ապահովագրողին հայտնի չեն դառնում պատահարի հետ կապված իրեն անհրաժեշտ հանգամանքներն ամբողջությամբ, որոնք հնարավորություն կտային համապատասխան որոշում ընդունել ապահովագրական հատուցման հարցի վերջնական կարգավորման վերաբերյալ և Ապահովագրողի կողմից սահմանված կարգով կամ ժամկետներում չեն կատարվել Կանոնների 8.2 կետում նշված պարտավորությունները:

#### **8.4. Ապահովագրողն իրավունք ունի՝**

ա) Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերների և գործակալների միջոցով,

բ) վերաապահովագրել իր ստանձնած ապահովագրական ռիսկը ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս,

գ) ուսումնասիրել Ապահովագրության օբյեկտը և անհրաժեշտության դեպքում հարցումներ կատարել համապատասխան իրավասու մարմիններին,

դ) միակողմանի վաղաժամկետ լուծել Ապահովագրության պայմանագիրը Ապահովագրողի կողմից՝ օրենսդրությամբ կամ Ապահովագրության պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում,

ե) իրականացնել Ապահովագրողի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

#### **8.5. Ապահովագրողը պարտավոր է՝**

ա) Ապահովագրողին ծանոթացնել Ապահովագրության պայմաններին, Ապահովագրողի պահանջով ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը,

բ) Ապահովագրողի պահանջով և օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Ապահովագրության պայմանագրում, եթե նրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,

գ) ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո պարզել նրանց իսկությունը և կատարել ապահովագրական հատուցում կամ մերժել այն,

դ) չիրապարակել Ապահովադրի բանկային, ապահովագրական, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները:

8.6. Ապահովադիրն ու Ապահովագրողն ունեն օրենքով, Կանոններով և Ապահովագրության պայմանագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

## **ԲԱԺԻՆ 9. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)**

9.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադիրն պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վարկառուի (վնասը պատճառած անձի) նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ վերջինիս կողմից հատուցված գումարի մասով: Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն Ապահովագրողին անցնելը բացառող Ապահովագրության պայմանագրի պայմանն առ ոչինչ է:

9.2. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

9.3. Ապահովադիրը (շահառուն) պարտավոր է ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

9.4. Եթե Ապահովադիրը (շահառուն) հրաժարվել է ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:

## **ԲԱԺԻՆ 10. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ**

10.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովադիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝

ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

10.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ծայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ձայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

10.3. Կետ 10.1-ում նշված Ապահովադրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

10.4. Ապահովադրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական

տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

10.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովադիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 10.1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովադիրը (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

## **ԲԱԺԻՆ 11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ**

11.1. Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

11.2. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Ապահովագրության պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ: